Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-389-04.10.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասում «օտարման» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն օրենքի 46-րդ հոդվածի 4.1-ին եւ 4.2-րդ մասերով սահմանված» բառերը:

Հոդված 2. Օրենքի 25-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 2-րդ կետում «պետական գրանցում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 46-րդ հոդվածի 4.6-րդ մասով սահմանված դեպքերում» բառերը:

2. 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) ներկայացվում է անշարժ գույքերի միավորման կամ անշարժ գույքի միավորների բաժանման գրանցման դիմում, բացառությամբ սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված դեպքերի:»:

Հոդված 3. Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասում՝

1.«Անշարժ գույքի հասցեավորումն» բառերից առաջ լրացնել «Բացառությամբ սույն օրենքի 46-րդ հոդվածի 4.4-4.5-րդ մասերով սահմանված դեպքերի,» բառերը.

2.«Անշարժ գույքի հասցեավորումն» բառերը փոխարինել «անշարժ գույքի հասցեավորումն» բառերով:

Հոդված 4. Օրենքի 46-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում «ավելի» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն մասի երկրորդ «պատկանող» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը:

2. 3-րդ մասում «Բաժանվող» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն մասում «նոր» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն մասում «միավորի սեփականատիրոջ» բառերից առաջ լրացնել «անշարժ գույք» բառերը:

3. 3-րդ մասի 1-ին կետում «բաժանվող» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն կետում «նոր» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն կետում «իրականացվում է բաժանվող» բառերից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը:

4. 3-րդ մասի 3-րդ կետում «բաժանվող» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն կետում « պայմանագրի (համաձայնագրի) հիման վրա» բառերից հետո «գույքի» բառը փոխարինել «անշարժ գույքի միավորի» բառերով, իսկ «դատական ակտի հիման վրա» բառերից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը:

5.4-րդ մասում «եթե» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն մասում «հաստատված» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը:

6. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1-4.6-րդ մասերով.

«4.1. Անշարժ գույքի միավորի նկատմամբ սեփականության իրավունքի իրավատերերը կարող են միավորել այդ անշարժ գույքի միավորը սույն օրենքով սահմանված կարգով իրենց անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքի միավորի հետ, առանց նախօրոք այդ անշարժ գույքի միավորի նկատմամբ՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր իրենց անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցման, պահպանելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունը:

4.2. Հողամասերի ընդլայնման նպատակով պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման դեպքերում օտարվող եւ ընդլայնվող հողամասերը գրանցվում են որպես մեկ ընդհանուր անշարժ գույքի միավոր, առանց նախօրոք օտարվող հողամասի նկատմամբ՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր ձեռք բերողների անվամբ սեփականության իրավունքի նոր պետական գրանցման:

4.3. Սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերում իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերից ծագող եւ անշարժ գույքերի միավորման իրավունքի պետական գրանցման դիմումում պետք է նշվի այն անշարժ գույքի միավորի հասցեն

կամ դրա ծածկագիրը, որի նկատմամբ, որպես անշարժ գույքի մեկ միավոր, պետք է իրականացվի իրավունքի պետական գրանցում:

4.4. Եթե սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում չի ներկայացվում միավորվող անշարժ գույքի միավորների հասցեավորման որոշում, ապա նոր առաջացող հասցեավորման օբյեկտը գրանցվում է սեփականության իրավունքով իրավատիրոջ անվամբ գրանցված անշարժ գույքի միավորի հասցեով, բացառությամբ, եթե միավորվող անշարժ գույքի միավորները Կառավարության կողմից սահմանված հասցեավորման կարգի պահանջներին համապատասխան արդեն իսկ գրանցված են առանձին հասցեներով:

4.5. Եթե սույն հոդվածի 4.2-րդ մասով սահմանված դեպքերում չի ներկայացվում միավորվող անշարժ գույքի միավորների հասցեավորման որոշում, ապա նոր առաջացող հասցեավորման օբյեկտը գրանցվում է ընդլայնվող անշարժ գույքի միավորի հասցեով:

4.6. Եթե ներկայացված իրավահաստատող փաստաթղթերով հնարավոր է հստակ ճշտել գրանցվող հողամասի բոլոր շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատները, ապա սույն հոդվածի 4.1-ին մասերով սահմանված դեպքում հողամասի հատակագիծ չի պահանջվում:»:

Հոդված 5. Օրենքի 74-րդ հոդվածի 8-րդ մասում «պարբերություններով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 75-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերը:

Հոդված 6. Օրենքի 75-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7.Անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով իրավական կադաստրի տեղեկատվության կազմից՝ համընդհանուր ծանոթացման համար՝ կարող է տրամադրվել անվճար տեղեկատվություն, որիցանկը, ինչպես նաև տրամադրման ժամկետները սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:»:

Հոդված 6. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-4-րդ հոդվածներից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը պետք է ընդունվի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, իսկ 5-6-րդ հոդվածներից բխող՝ համընդհանուր ծանոթացման համար անվճար տրամադրվող տեղեկատվության ցանկը, ինչպես նաև դրանց տրամադրման ժամկետները սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ
Կ-389-04.10.2022-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասում «օտարման» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն օրենքի 46-րդ հոդվածի 4.1-ին եւ 4.2-րդ մասերով սահմանված» բառերը:

Հոդված 2. Օրենքի 25-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 2-րդ կետում «պետական գրանցում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 46-րդ հոդվածի 4.6-րդ մասով սահմանված դեպքերում» բառերը:

2. 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) ներկայացվում է անշարժ գույքերի միավորման կամ անշարժ գույքի միավորների բաժանման գրանցման դիմում, բացառությամբ սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված դեպքերի:»:

Հոդված 3. Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասում՝

1.«Անշարժ գույքի հասցեավորումն» բառերից առաջ լրացնել «Բացառությամբ սույն օրենքի 46-րդ ~~հոդվածով~~հոդվածի 4.4-4.5-րդ մասերով սահմանված դեպքերի,» բառերը.

2.«Անշարժ գույքի հասցեավորումն» բառերը փոխարինել «անշարժ գույքի հասցեավորումն» բառերով:

Հոդված 4. Օրենքի 46-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում «ավելի» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն մասի երկրորդ «պատկանող» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը:

2. 3-րդ մասում «Բաժանվող» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն մասում «նոր» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը~~:~~, նույն մասում «միավորի սեփականատիրոջ» բառերից առաջ լրացնել «անշարժ գույք» բառերը:

3. 3-րդ մասի 1-ին կետում «բաժանվող» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն կետում «նոր» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն կետում «իրականացվում է բաժանվող» բառերից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը:

4. 3-րդ մասի 3-րդ կետում «բաժանվող» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն կետում « պայմանագրի (համաձայնագրի) հիման վրա» բառերից հետո «գույքի» բառը փոխարինել «անշարժ գույքի միավորի» բառերով, իսկ «դատական ակտի հիման վրա» բառերից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը:

5.4-րդ մասում «եթե» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն մասում «հաստատված» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը:

6. լրացնել -հետեւյալ բովանդակությամբ 4.1-4.6-րդ մասերով.

«4.1. Անշարժ գույքի միավորի նկատմամբ սեփականության իրավունքի իրավատերերը կարող են միավորել այդ անշարժ գույքի միավորը սույն օրենքով սահմանված կարգով իրենց անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքի միավորի հետ, առանց նախօրոք այդ անշարժ գույքի միավորի նկատմամբ՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր իրենց անվամբ

սեփականության իրավունքի պետական գրանցման, պահպանելով սույն հոդվածի - 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունը:

4.2. Հողամասերի ընդլայնման նպատակով պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման դեպքերում օտարվող եւ ընդլայնվող հողամասերը գրանցվում են որպես մեկ ընդհանուր անշարժ գույքի միավոր, առանց նախօրոք օտարվող հողամասի նկատմամբ՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր ձեռք բերողների անվամբ սեփականության իրավունքի նոր պետական գրանցման:

4.3. Սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերում իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերից ծագող եւ անշարժ գույքերի միավորման իրավունքի պետական գրանցման դիմումում պետք է նշվի այն անշարժ գույքի միավորի հասցեն կամ դրա ծածկագիրը, որի ~~հետ միասին~~նկատմամբ, որպես անշարժ գույքի մեկ միավոր, ~~ներկայացվում~~պետք է իրականացվի իրավունքի պետական ~~գրանցման~~գրանցում:

4.4. Եթե սույն հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում չի ներկայացվում միավորվող անշարժ գույքի միավորների հասցեավորման որոշում, ապա նոր առաջացող հասցեավորման օբյեկտը գրանցվում է սեփականության իրավունքով իրավատիրոջ անվամբ գրանցված անշարժ գույքի միավորի հասցեով, բացառությամբ, եթե միավորվող անշարժ գույքի միավորները Կառավարության կողմից սահմանված հասցեավորման կարգի պահանջներին համապատասխան արդեն իսկ գրանցված են առանձին հասցեներով:

4.5. Եթե սույն հոդվածի 4.2-րդ մասով սահմանված դեպքերում չի ներկայացվում միավորվող անշարժ գույքի միավորների հասցեավորման որոշում, ապա նոր առաջացող հասցեավորման օբյեկտը գրանցվում է ընդլայնվող անշարժ գույքի միավորի հասցեով:

4.6. Եթե ներկայացված իրավահաստատող փաստաթղթերով հնարավոր է հստակ ճշտել գրանցվող հողամասի բոլոր շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատները, ապա սույն հոդվածի 4.1-ին մասերով սահմանված դեպքում հողամասի հատակագիծ չի պահանջվում:»:

Հոդված 5. Օրենքի 74-րդ հոդվածի 8-րդ մասում «պարբերություններով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 75-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերը:

Հոդված 6. Օրենքի 75-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7.Անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով իրավական կադաստրի տեղեկատվության կազմից՝ համընդհանուր ծանոթացման համար՝ կարող է տրամադրվել անվճար տեղեկատվություն~~: Համընդհանուր ծանոթացման համար անվճար տրամադրվող տեղեկատվության ցանկը~~, որիցանկը, ինչպես նաև տրամադրման ժամկետները սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:»:

Հոդված 6. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~-~~

2. Սույն օրենքի 1-4-րդ հոդվածներից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը պետք է ընդունվի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, իսկ 5-6-րդ հոդվածներից բխող՝ համընդհանուր ծանոթացման համար անվճար տրամադրվող տեղեկատվության ցանկը, ինչպես նաև դրանց տրամադրման ժամկետները սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-389-04.10.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հ/Հ	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	***ՀՀ կառավարություն***	**2-րդ հոդված**	Հոդվածը բաժանել 1-ին, 2-րդ մասերի՝ հետևյալ բովանդակությամբ. ***«Հոդված 2.*** Օրենքի 25-րդ հոդվածում՝ **1.** 1-ին մասի 2-րդ կետում «պետական գրանցում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 46-րդ հոդվածի 4.6-րդ մասով սահմանված դեպքերում» բառերը: **2.** 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			խմբագրությամբ. «2) ներկայացվում է անշարժ գույքերի միավորման կամ անշարժ գույքի միավորների բաժանման գրանցման դիմում, բացառությամբ սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված դեպքերի։»։ **Կարգավորման նպատակն է անշարժ գույքի միավորման որոշ դեպքերում իրավունքի պետական գրանցման համար ներկայացվող անշարժ գույքի հասցեի որոշման պահանջի վերացումը:**		
2.	***ՀՀ կառավարություն***	**3-րդ հոդված**	«օրենքի 46-րդ» բառերից հետո լրացնել «հոդվածի 4.4-4.5-րդ մասերով» բառերը **3-րդ հոդվածում հղում է կատարվել 46-րդ հոդվածի 4.4-4.5-րդ մասերին, որի պարագայում ակնհայտ է դառնում, որ առանց հասցեավորման որոշումների գրանցում իրականացնող մարմինը, անշարժ գույքի միավորը գրանցում է սեփականության իրավունքով իրավատիրոջ անվամբ**	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գրանցված/ընդլայնվող անշարժ գույքի միավորի հասցեով:		
3.	***ՀՀ կառավարություն***	**4-րդ հոդված**	**1.** 4-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «բառերը:» բառից հետո լրացնել «, նույն մասում «միավորի սեփա-կանատիրոջ» բառերից առաջ լրացնել «անշարժ գույք» բառերը:» բառերով: **2.** 4-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «4. 3-րդ մասի 3-րդ կետում «բաժանվող» բառից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը, նույն կետում « պայմանագրի (համաձայնագրի) հիման վրա» բառերից հետո «գույքի» բառը փոխարինել «անշարժ գույքի միավորի» բառերով, իսկ «դատական ակտի հիման վրա» բառերից հետո լրացնել «անշարժ գույքի» բառերը:»: **Լրացումը պայմանավորված է Օրենքում «անշարժ գույքի» եզրույթի հասկացության միատեսակ կիրառմամբ:** Նախագծի 4-րդ հոդվածի 6-	Ընդունվել է:	Ընդունվել է:

		4-րդ հոդվածի **6-րդ մասով լրացվող 4.3-րդ կետ**	դ մասով՝ Օրենքի 46-րդ հոդվածում լրացվող նոր՝ 4.3-րդ կետում «ծածկագիրը,» բառից հետո լրացնել «որի նկատմամբ, որպես անշարժ գույքի մեկ միավոր, պետք է իրականացվի իրավունքի պետական գրանցում։»: բառերը: **Փոփոխությունը պայմանավորված է գրանցվող անշարժ գույքի միավորի հասցեի հստակեցման անհրաժեշտությամբ:**	Ընդունվել է :	Ընդունվել է:
4.	***ՀՀ կառավարություն***	**4-րդ հոդվածից հետո լրացվող նոր՝ 5-րդ հոդված**	4-րդ հոդվածից հետո լրացնել նոր 5-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 5. Օրենքի 74-րդ հոդվածի 8-րդ մասում «պարբերություններով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 75-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերը։», **Լրացվող նորմի համաձայն անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը**	Ընդունվել է:	Ընդունվել է:

			լիազորվում է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ, որտեղ ի թիվս նշվածի նաև կսահմանվի տեղեկատվության տրամադրման ժամկետները: Դրանով պայմանավորված հոդվածների համարակալումը փոխվել է:		
5.	***ՀՀ կառավարություն***	**5-րդ հոդված (լրամշակված 6-րդ) հոդված**	«տեղեկատվություն:» բառից հետո լրացնել «, որի ցանկը, ինչպես նաև տրամադրման ժամկետները սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:»: բառերը: **Համընդհանուր ծանոթացման համար տեղեկատվության տրամադրման պահանջ է:**	Ընդունվել է :	Ընդունվել է:
6.	***ՀՀ կառավարություն***	**6-րդ հոդված (լրամշակված 7-րդ) հոդված**	Հոդվածը ներկայացնել հետևյալ բովանդակությամբ՝ **«Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:	Ընդունվել է :	Ընդունվել է:

			2. Սույն օրենքի 1-4-րդ հոդվածներից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը պետք է ընդունվի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, իսկ 5-6-րդ հոդվածներից բխող՝ համընդհանուր ծանոթացման համար անվճար տրամադրվող տեղեկատվության ցանկը, ինչպես նաև դրանց տրամադրման ժամկետները սահմանող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:»: **Նախատեսվող նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունից ելնելով:**		